ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

Քաղ. Երևան 27 դեկտեմբերի 2019թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Պետրոսյանի
Անդամակցությամբ՝ Ա. Թունյանի
Ա. Գյուլումյանի

ՎԱՆՈՒՀԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ՝ 09.12.2019Թ. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԲՈՂՈՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Վանուհի Մարգարյանը 09.12.2019թ. դիմել է Սահմանադրական դատարան:

2. Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարն իր՝ 10.12.2019թ. Ա/1282-2019 գրությամբ Վ. Մարգարյանին տեղեկացրել է, որ վերջինս իր՝ 09.12.2019թ. դիմումում չի պահպանել «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի պահանջը: 18.12.2019թ. Սահմանադրական դատարան է մուտքագրվել Վ. Մարգարյանի դիմումը: Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարի 19.12.2019թ.

Ա/1330-2019 գրությամբ Վ. Մարգարյանին տեղեկացվել է, որ 18.12.2019թ. դիմումով վերստին չի պահպանվել «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջը, և հիշյալ դիմումները վերադարձվել են Վ. Մարգարյանին:

3. Վ. Մարգարյանը 27.12.2019 թ. Սահմանադրական դատարան է ներկայացրել անհատական դիմումը վերադարձնելու կապակցությամբ բողոք:

4. Ուսումնասիրելով Վ. Մարգարյանի ներկայացրած դիմումները, Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարի գրությունները՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը փաստում է, որ դիմողի կողմից չեն պահպանվել «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջը, մասնավորապես, դիմողն իր դիմումներում չի նշել Սահմանադրական դատարան ներկայացվող խնդրանքը և իր փաստարկները՝ հաշվի առնելով, որ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ անհատական դիմումով Սահմանադրական դատարանում կարող է վիճարկվել նորմատիվ իրավական ակտի դրույթը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով, 26-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Վանուհի Մարգարյանի բողոքը մերժել:

Նախագահող

Անդամներ՝

27 դեկտեմբերի 2019 թվականի
ՍԴԴԿՈ-70